Հաստատված է
12 հոկտեմբերի 2016 թվականի
ավագանու թիվ 10-Լ որոշմամբ

ՊԱՌԱՎԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2016 – 2021 Թ.Թ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Պատմական ակնարկ

Պառավաքար (Թաթլիքենդ) – Գտնվում է ՀՀ Տավուշի մարզի տարածաշրջանում, Հախում գյուղի ձախ ափին, Հախումի լեռնաշղթայի Պառավաքար լեռան ստորոտում, Բերդ քաղաքից 27 կմ հյուսիս-արևմուտք, ծովի մակերևույթից 810 մ բարձրության վրա: Գյուղը Պառավաքար է կոչվել հենց Պառավաքար լեռան անունով: Կլիման բարեխառն է: Հունվարյան միջին ջերմաստիճանը -1 C -ից -2 C է, հուլիսյանը՝ 23 C–ից 24 C:

Գյուղի տարածքը գտնվում է Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Տավուշ գավառի մեջ: Գյուղի շրջակայքում կան մատուռներ, խաչքարեր և գյուղատեղիներ: Ցարական իշխանության ժամանակ գյուղը եղել է Ելիզավետապոլի նահանգի Ղազախի գավառում: Մինչև 1927 թ. գյուղը գտնվում էր այժմյան տեղից 1.5 կմ արևելք՝ Թաթլու գյուղատեղիում:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո գյուղը մտնում էր Դիլիջանի գավառի Շամշադինի գավառակի, ապա ՀԽՍՀ Շամշադինի շրջանի մեջ:

Համայնքի տնտեսական բնութագիրը

Պառավաքար համայնքում բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ:
Գյուղական համայնքի տնտեսական պոտենցիալը հիմնականում պայմանավորված է նրա ունեցած հողային ռեսուրսով, նրա կառուցվածքով, ռոզելիության աստիճանով, մեքենազինվածության մակարդակով, ունեցած մարդկային կապիտալի որակական կազմով և արտադրության կազմակերպման առանձնահատկություններով:

Հողային ռեսուրս

Պառավաքար համայնքի ընդհանուր հողատարածքը կազմում է 3857.54 հա, որի մեջ ներառվում են.

- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3122.11 հա
- Բնակավայրի հողեր՝ 216.96 հա
- Արտադրական նշանակության օբյեկտների հանձնված հողեր՝ 5.08 հա
- Էներգետիկ., տրանսպորտ., կապի և կոմունալ տնտես. ենթակայության հողեր՝ 12.01 հա
- Հատուկ պահպանվող տարածքներ՝ 18.49 հա
- Անտառային՝ 389.58 հա
- Ջրային՝ 91.31 հա

Ակնհայտ երևում է, որ համայնքը ունի բավարար հողային ռեսուրս և բարենպաստ նախադրյալներ գյուղատնտեսության, անասնապահության զարգացման համար, չնայած սեփականաշնորհված հողերի մի զգալի մասի մշակելու հնարավորությունից զրկվել են բնակչության մեծ մասը պատերազմի պատճառով:

Մողովրդագրություն

Համայնքի մշտական բնակչության թվաքանակը 1697 է, տնային տնտեսությունների թիվը 560:

Համայնքում մեծ է արտագնա աշխատանքի մեկնողների թվաքանակը: Ավելացել է համայնքից դեպի Երևան բնակության մեկնողների թիվը:

Համայնքում կա 456 առանձնատուն, 5 բազմաբնակարանային շենք:

Համայնքը ունի կենտրոնացված ջրամատակարարում, կա կոյուղագիծ:

Գազամատակարարումը հասանելի է բնակչության մոտ 98 %-ին:

Համայնքը ունի արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգ:

Համայնքում գործում է ՔՊ ստորաբաժանում, որը բացի իր դերից և նշանակությունից լուծել է նաև աշխատատեղի խնդիրը:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի

ֆիզիկական վիճակը

1. Մշակույթի տուն
2. Գրադարան
3. Հանդիսությունների սրահ
4. <<ԳԲԱ>> ՓԲԸ
5. Խմելու ջրի ցանց
6. Ոռոգման ներքին ցանց

Համայնքի սեփականություն համարվող գույքը ունի վերանորոգման, վերակառուցման կարիք:

Առողջապահություն

Համայնքում գործում է <<ԳԲԱ.>> ՓԲԸ, որտեղ աշխատակիցների թիվը 10-ն է:

Ամբուլատորյան սպասարկում է նաև հարևան Վարագավան և Վ. Ծաղկավան համայնքներին:

Ամբուլատորյայի շենքի վիճակը բավարար է, սանհանգույցը նորմալ, ունի առաջնային բուժսպասարկան համար անհրաժեշտ գիտելիքներով և փորձով օժտված մասնագետ ընտանեկան բժիշկ և կադրեր, բայց, հաշվի առնելով առողջապահության ոլորտի ներկա վիճակը, այն ունի նյութատեխնիկական բազայի բարելավման և ամրապնդման խնդիր:

Կրթություն

Համայնքում առկա է և գործում է նախադպրոցական 1 (մեկ) հաստատություն և 1 (մեկ) դպրոց:

Նախադպրոցական կրթությունը համայնքում իրականացվում է գյուղապետարանի

ենթակայությամբ գործող մանկապարտեզի կողմից: Վերջինիս պահպանության ծախսերը ձևավորվում են ծնողական հավաքագրվող գումարներից և գյուղապետարանի կողմից կատարվող հատկացումներից: Նախորդ քառամյա ծրագրի հիմնախնդիրներից մեկը հանդիսացող մանկապարտեզի շենքի 1-ին հարկի վերանորոգումը և նոր խմբասենյակի բացումը արդեն իրականություն է, որը հնարավորություն է տալիս ավելի շատ սաներ ընդգրկելու: Թարմացված են խաղալիքները և երեխաների հանգստի և ժամանցի համար անհրաժեշտ պարագաները:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում են 210 աշակերտներ:

Դպրոցը վերանորոգված է, ունի շենքային բավարար պայմաններ, բացառությամբ մարզադահլիճի;

Տարեցտարի բավարվում է աշակերտների հոգևոր կրթության և ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետելու կարողության մակարդակը:

Մշակույթ

Համայնքում մշակութային կյանքը պասիվ է, բացակայում է միջհամայնքային մշակութային համագործակցությունը:

Չնայած վերը նշվածին, համայնքը ունի շենքային լավ պայմաններով մշակույթի տուն, բայց վերջինս ապահովված չէ գործիքներով և սարքավորումներով:

Տեղական ինքնակառավարման մարմինը

Համայնքը կառավարում է համայնքի ղեկավարը, որը ընտրվում է 4 (չորս) տարին մեկ անգամ:

Տեղական ինքնակառավարումը համայնքում իրականացվում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով:

Աշխատակազմի կառուցվածքը հետևյալ է.

1. համայնքի ղեկավարի օգնական
2. աշխատակազմի քարտուղար
3. գլխավոր մասնագետ՝ 2
4. օպերատոր
5. ցրիչ
6. պարետ
7. տնտեսվար
8. վարորդ
9. հավաքարար

Համայնքի ուժեղ կողմերը

1. ՏԻՄ ղեկավարության հետևողականություն
2. Համայնքը 98% -ով գազաֆիկացված է

3. Համայնքի կենտրոնական ճանապարհը ասֆալտապատված է
4. Կենտրոնական ճանապարհի վրա անց է կացվել փողոցային լուսավորություն
5. Նոր և ժամանակակից գյուղտեխնիկայի (իրենց գործիքներով) առկայություն:

Համայնքի թույլ կողմերը

1. Գործազրկության բարձր մակարդակ
2. Ոռոգման ցանցի ոչ բարվոք վիճակ
3. Խմելու արրտաքին և ներքին ջրագծերի անմխիթար վիճակ
4. Հեռավորությունը և թույլ կապը շուկաների հետ:

Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

Բարեփոխումներ կատարելու ճանապարհով հետևողականորեն բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային, հոգևոր և հանգստի պայմանները:
2016 – 2021 թթ. հետևողականորեն և լրջորեն լուծել համայնքի ներքոհիշյալ խնդիրները.

1. Խմելու ջրագծի ներքին ցանցի վերակառուցում և ջրաչափերի տեղադրում
2. <<Հանդիսությունների սրահ>>-ի շենքի վերանորոգում (գույքի ձեռք բերում)
3. Խմելու ջրագծի արտաքին ցանցի (27 կմ) վերակառուցում
4. Համայնքի 1 (մեկ) թաղամասի գազաֆիկացում
5. Ոռոգման ներքին ցանցի վերակառուցում
6. Գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում
7. Աշխատատեղերի ստեղծում
8. Գյուղատնտեսության զարգացում
9. Մատուռի կառուցում
10. Փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում
11. Խաղահրապարակի կառուցում
12. Դպրոցի մարզադահլիճի վերանորոգում:

Վտանգներ

1. Ռազմական հակամարտության վերսկսման վտանգ
2. Սահմանային գոտում առկա հողային ռեսուրսի լիարժեք օգտագործման հնարավորության բացակայություն: